

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՐՁԸ

ՇՊՀ-ՈՒՄ

Սարգսյան Ա. Հ., Մելքոնյան Հ. Ս.

Հոդվածում անդրադարձ է կատարվում կրթության, մասնավորապես բարձրագույն կրթության համակարգի կարգավիճակի ու դերի փոփոխությանը, ինչպես նաև հեռավար ուսուցմանն առնչվող մասնագիտական գրականության մեջ առկա որոշ հասկացությունների անվանումներին՝ առանձնացնելով դրանց իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները:

Մյուս կողմից՝ ներկայացվում է Շիրակի պետական համալսարանում կիրառված հեռավար ուսուցման փորձը, դրա գնահատման նպատակով ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված հարցման արդյունքների վերլուծությունը:

Բանալի բառեր. հեռավար ուսուցում, բաց ուսուցում, հարատև (ցկյանս) կրթություն, սովորող կազմակերպություն, կրթության մատչելիություն և ժողովրդավարություն:

Ժամանակակից արագ զարգացող աշխարհում փոփոխություններն ընդգրկել են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Դա ավելի ցայտուն է դրսևորվում ու արտահայտվում հատկապես փոխակերպվող հասարակություններում, ինչպիսին է, օրինակ, հայ հասարակությունը: Այդ փոփոխությունները հիմնականում դրսևորվում են ոչ միայն նոր հասկացությունների, հասարակական նոր հարաբերությունների, սոցիալական նոր ինստիտուտների ձևավորմամբ ու զարգացմամբ, այլև արդեն եղածների գործառույթների բազմազանեցմամբ, վերանայմամբ ու կարգավիճակային փոփոխություններով:

Մասնավորապես՝ որոշակիորեն փոխվել է կրթության ինստիտուտի ինչպես կարգավիճակը, այնպես էլ դրանից բխող հիմնական դերերը:

Կրթությունը, մասնավորապես՝ բարձրագույն կրթությունը, պայմանավորված հասարակական-քաղաքական, տնտեսական ու ժողովրդագրական զարգացումների արդյունքում ստեղծված իրավիճակով, այսօր նոր կարգավիճակ է ստացել՝ իրականացնելով ոչ միայն և ոչ այնքան լրացուցիչ մասնագիտական գիտելիքներ հաղորդողի, որքան, ու թերևս ավելի շատ, անհատի ու խմբերի սոցիալականացմանը, հասարակական ինտեգրմանը, սոցիալական մասնակցությանն ու ներառականության ապահովմանը նպաստող գործառույթ: Այսինքն՝ ընդլայնվել է նրա՝ սոցիալական պատասխանատվության, հասարակությանը մատուցվող ծառայությունների շրջանակը՝ նոր մարտահրավերներ առաջադրելով կրթական ոլորտի թե՛ վարչարարներին և թե՛ ուսուցանողներին:

Այս տեսանկյունից, կարծում ենք, ավելի ընկալելի ու ընդունելի է դառնում հարատև կամ ցկյանս կրթության առաջացման անհրաժեշտությունը, դրա ներքին տրամաբանությունը: Այսինքն՝ եթե սոցիալական բավականին արագ, երբեմն անկանխատեսելի փոփոխություններն ուղեկցում են անհատներին, խմբերին ու ամբողջ հասարակությանն իրենց ամբողջ կյանքի ընթացքում, բնականաբար, դրանց հարմարվելու, դրանց վրա ազդելու արդյունավետ գործիքներից մեկը՝ կրթությունը՝ սովորելը, նույնպես շարունակական ու հարատև է լինելու ամբողջ կյանքի ընթացքում: Ընդ որում՝ դա ուղեկցվելու է ոչ միայն լրացուցիչ մասնագիտական գիտելիքներ հաղորդելով, այլ նաև, ինչպես մասնագետն է նշում, կյանքի բոլոր ոլորտների վերաբերյալ նոր գիտելիքների հաղորդմամբ և հատկապես դրանց կիրառման կարողությունների ու հմտությունների զարգացման ուղղությամբ տարվող մեթոդների արդիականացմամբ [3]:

Այսինքն՝ կրթությունը, առաջնորդվելով սոցիալական պահանջարկով և պայմանավորված այդ պահանջարկն առավելագույնս բավարարելու իր հնարավորություններով, դրանց շարունակական բարելավմամբ ու արդիականացմամբ, կարող է սոցիալական արժեքից (public value) վերաճել ու դառնալ հասարակական բարիք (public good): Իսկ այս փոխարկումը նույնպես պայմանավորված է նրանով, թե՛ ինչքանով է բաց կրթական ծառայություններ մատուցող կառույցը՝

դպրոց, քոլեջ, բուհ և այլն, նորությունների ընկալմանն ու տեղայնացմանը, նոր բան սովորելուն և կիրառելուն:

Մասնագիտական գրականության մեջ այս իրողությունն անվանվում է սովորող կազմակերպություն, որի առանձնահատկություններից մեկն է համարվում կազմակերպության ներսում իրականացվող ուղղահայաց ու հորիզոնական ուսուցման խրախուսումը [3, 9]:

Առաջին հայացքից թվում է, թե ամեն ինչ շատ պարզ է ու հեշտ իրագործելի: Սակայն այս ճանապարհին, բացի առանձին անհատների կամ կազմակերպությունների կողմից դրսևորվող իներցիայից ու իներտությունից, որպես հիմնական մարտահրավեր առանձնացվում է նրանց արժեներմատիվային համակարգը կամ, ավելի ճիշտ, դրանում անհրաժեշտ վերանայումներ, վերաարժևորումներ կատարելու անհրաժեշտությունը: Ինչպես գիտենք, անհատական, խմբային ու սոցիալական արժեքները, նորմերը բավականին նուրբ ու զգայուն ոլորտ են ներկայացնում և դրանում կատարվող փոփոխությունները համարժեք մոտեցում են պահանջում, այլապես ներքին փլուզումներն անխուսափելի կլինեն:

Այս հանգամանքով է թերևս պայմանավորված, որ մասնագետներն առանձնացնում են սովորելու երկու հիմնական տեսակ՝ միափուլ և երկփուլ՝ վերջինիս համար բնութագրիչ համարելով այն, որ նոր բան սովորելու համար անհրաժեշտ է վերանայել ու լրամշակել սեփական նորմերը, ռազմավարություններն ու նպատակները [8]:

Ինչպես տեսնում ենք, սովորելու համար նույնպես պետք է ինչ-որ նոր բաներ սովորել, այսինքն՝ պետք է **սովորել, սովորել:**

Մի կողմից կարևորելով այս հանգամանքը, մյուս կողմից հաշվի առնելով ժամանակակից գիտության ու տեխնիկայի նվաճումներն ու դրանց կիրառման անհրաժեշտությունը սովորելու, կրթական գործընթացի կազմակերպման ու իրականացման արդյունավետության ապահովման գործում՝ կարծում ենք՝ որոշ վերապահությամբ կարելի է ասել, որ, ըստ էության, ցանկալի արդյունքի ապահովման տեսանկյունից էական տարբերություններ չկան ուսուցման առկա, հեռակա, հեռավար տարբերակների միջև: Կամ, ավելի ճիշտ, դրանց համադրումը, փոխլրացումը թերևս ավելի շուտ կնպաստի առաջադիր նպատակին հասնելուն, քան դրանցից մեկի առկայությունը կբացառի մյուսի կիրառման հնարավորությունը:

Այլ բան է, որ ինչպես վերը նշված հասկացությունները, այնպես էլ դրանց առնչվող ևս մի քանիսը թե՛ բովանդակային և թե՛ կիրառման

առումով առավել հստակեցման, ճշգրտման կարիք ունեն, ինչը, ըստ էության, շարունակվում է կատարվել մինչև օրս, քանի որ դրանց մեծ մասը համեմատաբար նոր առաջացած իրողություններ են:

Մասնավորապես՝ եթե առկա ու հեռակա կրթական համակարգերը բավականին մշակված են, շատերիս համար հասկանալի և, ըստ էության, ուսումնական գործընթացի կազմակերպման ու իրականացման՝ այժմ կիրառվող հիմնական տարբերակներն են, ապա նույնը չենք կարող ասել հեռավար կրթության, բաց կրթության մասին, քանի որ սրանք անհամեմատ ավելի ուշ ձևավորված գործընթացների ու հասկացությունների անվանումներ են: Սրանով պայմանավորված, ինչպես վերևում էլ նշեցինք, մասնագիտական գրականության մեջ դեռևս շարունակվում են այդ հասկացությունների կարգավիճակային, բովանդակային հարցերի քննարկումներն ու ճշգրտումները [4-5, 7]:


Այսինքն՝ երբեմն միևնույն հարթության վրա համադրվում ու համեմատվում են **ավանդական ուսուցում, բաց ուսուցում, հեռավար ուսուցում, առցանց ուսուցում, դեմ առ դեմ (face to face) կամ լսարանային ուսուցում** և նման հասկացությունները [9]: Սակայն սրանք, ըստ էության, տարբեր մակարդակների իրականություններ են և հստակ տարբերակման կարիք ունեն: Այս տեսանկյունից, կարծում ենք, նախընտրելի է այն մոտեցումը, ըստ որի՝ մի կողմից առանձնացվում և համեմատվում են նախ՝ **ավանդական ու բաց ուսուցման** համակարգերը՝ դրանք դիտելով որպես կրթական հայեցակետ կամ գաղափարախոսություն, մյուս կողմից՝ համեմատվում են **լսարանային (face to face) ու հեռավար կրթության** ձևերը՝ որպես կրթական մեթոդներ [7]: Այսպիսի մոտեցման դեպքում նշվում է, որ որպես **ավանդական կրթության** իրականացման հիմնական ձև կիրառվում է **լսարանային (face to face) մեթոդը**, իսկ **բաց ուսուցման** դեպքում՝ **հեռաուսուցման մեթոդը**: Իհարկե, այսպիսի առանձնացումը հիմնականում համապատասխանում է մեր իրականության մեջ առկա վիճակին: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի Բաց համալսարանում հիմնականում կիրառվում է հեռաուսուցման մեթոդը: Սակայն նույնիսկ այստեղ էլ այսօր իսպառ չեն բացառում լսարանային (face to face) պարապմունքների անցկացումը՝ կիրառելով այսպես կոչված խառը կամ հիբրիդային ուսուցումը (blended learning):

Մյուս կողմից՝ բաց ուսուցումը, ըստ էության, կրթական գործընթացի կազմակերպման ու իրականացման նոր փիլիսոփայություն է նաև [4], ինչը, առավելագույնս վերացնելով կրթություն

ստանալու առկա արգելքներն ու սահմանափակումները (տարիքային, կրթական հաջորդ մակարդակ անցնելու ժամանակ նախորդ մակարդակի պարդադիր առկայություն և այլն)՝ նպաստում է կրթության ժողովրդավարացմանը, մատչելիության ապահովմանը: Այս առումով կարծում ենք, որ բաց ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունները կարող են մասնակի կամ ամբողջությամբ կիրառել նաև լսարանային (face to face) մեթոդը: Ինչպես որ հեռուսուցման մեթոդն էլ կարող են ամբողջությամբ կամ մասնակիորեն կիրառել թե՛ բաց և թե՛ ավանդական կրթական հաստատությունները [9]:


Մասնագիտական գրականության մեջ միասնական մոտեցում չկա նաև անվանումների, տերմինների կիրառման հարցում: Գրեթե հավասար չափով գործածվում են **հեռավար ուսուցում** (երբեմն՝ նաև **հեռահար**, ինչը պիտի բացառել), **հեռավար կրթություն**, **հեռուսուցում**, **հեռակրթություն**, **բաց ուսուցում**, **բաց կրթություն** և այլն: Եթե նկատի ունենանք, որ ուսումնական հաստատությունների հիմնական գործառնություններից մեկը ոչ միայն մասնագիտական գիտելիքներ հաղորդելն ու սովորեցնելն է, այլ նաև մշակութային տարրերի փոխանցելը, կրթելն ու դաստիարակելը, ապա գուցե նախընտրելի պիտի համարվեն **հեռավար կրթություն**, **հեռակրթություն**, **բաց կրթություն** տարբերակները: Թեև կարծում ենք, որ այստեղ, պայմանավորված ավանդույթի ուժով ու իներցիայով, դեռ երկար կշարունակվի առկա երկձևությունը:

Այժմ անդրադառնանք ՇՊՀ-ում հեռավար ուսուցման կազմակերպման փորձին: 2020 թ.-ի համավարակի պայմաններում, ինչպես ամբողջ ՀՀ-ում և աշխարհում, այնպես էլ ՇՊՀ-ում հանպատրաստից և պարտադիր անցում կատարվեց հեռավար ուսուցման՝ կիրառելով բոլոր հնարավոր միջոցները, որոնք առկա էին և հասանելի էին ՊԴ և ուսանողական կազմերի կողմից՝ միաժամանակ հրնթացս ապահովելով փորձի փոխանակումը և փոխադարձ աջակցությունը: ՇՊՀ-ում հեռավար ուսուցման կազմակերպման գործընթացից ուսանողների և դասախոսների բավարարվածության և կարիքների գնահատման նպատակով ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից մշակվել են համապատասխան հարցաշարեր [11, 12] և իրականացվել հարցումներ առցանց եղանակով՝ կիրառելով Google forms միջոցը: Մասնակցել են 236 ուսանող և 54 դասախոս:




Նշենք, որ դիագրամներում ամենուրեք կապույտ գույնով ներկայացված են ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքները, իսկ կարմիր գույնով՝ դասախոսների:


Հիմնականում բոլոր դասընթացներն անցկացվել են առցանց եղանակով, սակայն առկա են եղել առանձին խնդիրներ՝ տարբեր հանգամանքներով պայմանավորված:




Հարցումներից պարզ դարձավ, որ գլխավորապես կիրառվել է Zoom հարթակը, միաժամանակ համադրվել են այլ միջոցներ:




Կարևոր էր այն, որ բոլոր դասընթացների համար ՇՊՀ-ում դասախոսներն ունեին կազմած դասախոսությունների էլեկտրոնային փաթեթներ, սրա կարևորությունն առավել նկատելի դարձավ հեռավար ուսուցման ժամանակ, չնայած պակաս կարևորություն չունի նաև այլ էլեկտրոնային նյութերի կիրառումը:




Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ հեռավար ուսուցումն այնքան էլ նախընտրելի չէ շահակիցների համար, առավելապես՝ ուսանողների:



Շահակիցները հիմնականում ունեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, սակայն միշտ չէ, որ եղած տեխնիկական միջոցները ապահովել են լիարժեք արդյունավետություն, մասնավորապար՝ հիմնականում կիրառվել են հեռախոսներ:



Հեռավար ուսուցման պայմաններում հանձնարարականների և դրանց վերաբերյալ հետադարձ կապի ապահովումն առավել կարևորություն է ստանում, միաժամանակ պետք է փաստել, որ դրանց իրականացման ձևերը կիրառման ընթացքում որոշ փոփոխությունների են ենթարկվել:



Պետք է փաստել նաև, որ հեռավար ուսուցման պայմաններում ուսանողների ներգրավվածությունը բավականին բարձր է, առանձին դեպքերում (մագիստրատուրա, հեռակա ուսուցման համակարգ) նույնիսկ ավելին, քան դեմ առ դեմ կամ լսարանային ուսումնառության պայմաններում:

Հեռավար ուսուցման պայմաններում ուսանողների հիմնական դժվարությունները եղել են ծրագրային և կապի ապահովման խնդիրները, ինչպես նաև սոցիալական շփման բացակայությունն ու տեխնիկական միջոցներով աշխատանքի ոչ այնքան գրավիչ լինելը: Դասախոսները, բացի վերոնշյալ խնդիրներից, նաև առանձնացրել են տեխնիկական միջոցների ոչ լիարժեքությունը, ժամանակի սակավությունը: Հարկ է նշել, որ և՛ դասախոսները, և՛ ուսանողները վերապատրաստումների և խորհրդատվությունների անհրաժեշտություն են տեսել:

Առանձին խնդիրների հիման վրա ՇՊՀ-ում մի շարք գործընթացներ են իրականացվել, մասնավորաբար՝ կազմակերպվել են պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ, խորհրդատվություններ են անցկացվել խմբերի ավագների հետ, յուրաքանչյուր կուրսի համար ստեղծվել են Zoom էջեր, ինչի արդյունքում ուսումնական գործընթացը առավել հեշտ վերահսկելի է դարձել թե՛ ֆակուլտետների, թե՛ այլ վարչական օղակների կողմից: Միաժամանակ համալսարանը տեխնիկական աջակցություն է ցուցաբերել ուսանողներին և դասախոսներին:

Այսպիսով, կարելի է ասել, որ հեռավար ուսուցման կազմակերպումը ՇՊՀ-ում, չնայած հանպատրաստից և ժամանակի պահանջով ու պարտադրանքով է թելադրվել, սակայն բավականին արդյունավետ է եղել: Միաժամանակ կազմակերպված հարցումները թույլ են տվել վեր հանել խնդիրները և շահակիցների կարիքները, որոնց լուծման և բավարարման ուղղությամբ ձեռնարկվել են հնարավոր համարժեք միջոցառումներ:

ОПЫТ ОРГАНИЗАЦИИ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ В ШГУ

Саргсян А. А., Мелконян О. С.

В статье рассматриваются изменения статуса и роли образования, в частности, системы высшего образования, а также названия некоторых понятий в профессиональной литературе, относящихся к

дистанционному обучению, с выделением их семантических сходств и различий.

С другой стороны, представлен используемый опыт дистанционного обучения в Ширакском государственном университете, а также анализ результатов опроса, проведенного среди студентов и преподавателей для его оценки.

Ключевые слова: дистанционное обучение, открытое обучение, непрерывное обучение, обучающаяся организация, доступ и демократизация образования.

DISTANCE LEARNING ORGANIZING EXPERIENCE IN STATE UNIVERSITY OF SHIRAK

Sargsyan A. H., Melkonyan H. S.

The article examines issues related to the change of status and roles of education, in particular the higher education system, as well as the names of some concepts in the professional literature are introduced related to distance learning, highlighting their semantic similarities and differences.

On the other hand, the used experience of distance learning at State University of Shirak is presented, as well as an analysis of the results of survey conducted among students and teachers to evaluate it.

Keywords: Distance Learning, Open Learning, Lifelong Learning, Learning Organization, Accessibility and Democracy of Education.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սոխիկյան Գ. Հեռավար ուսուցում: Երևան: Հյուսիսային համալսարան: 2018: 125 էջ:
2. Лебедева М. Б., Агапонов С. Г., Горюнов М. А., Костиков А. Н., Костикова Н. А., Никитина Л. Н., Соколова И. И., Степаненко Е. Б., Фрадкин В. Е., Шилова О. Н. Дистанционные образовательные технологии. Санкт-Петербург:Изд.-во «БХВ-Петербург». 2010. 330 с.
3. Կաժոյան Հ. Հաղորդակցություն սոցիալական փոփոխության համար. Ցանցային համագործակցության հիմունքներ: Երևան: «Լուսակն»: 2004: 143 էջ:
4. Rowntree D. Exploring Open and Distance Learning. London. Kogan Page Limited. 1992. 299 p.

5. Osborne A. Distance Learning in Social Work Education. London. CCETSW. 1985. 151 p.
6. Բեգիրջյան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան Ս. Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու: Երևան: «Աստղիկ»: 2017: 151 էջ:
7. Խուրշուդյան Ա. Բ. Հեռակրթության համակարգի ներդրման հիմնախնդիրները և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում (ատենախոսության սեղմագիր): Երևան: 2004: 22 էջ:
8. <https://www.google.com/search?q=single+double+loop+learning+chris+argyris&oeq=senge+double+loop&aqs=chrome.2.69i57j0i10l2.37064j0j7&sourceid=chrome&ie=UTF-8> (09.09.2021)
9. <https://infed.org/mobi/peter-senge-and-the-learning-organization/> (09.09.2021)
10. <https://www.saide.org.za/resources/Library/Moore%20-%20UNESCO%20ODL%20trends%20policy%20and%20strategy%20.pdf> (09.09.2021)
11. <https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSf2CT-A-Yd4uXW2g1c8wpKCwoX9MsD3aIcIpDrspTe8fR0uaw/viewform> (28.10.2021)
12. https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSfT6M9B494C7FovYZ_qIqR0pSZV9mu1JETnGJdFKdjkGldpuw/viewform (28.10.2021)

Տեղեկություններ հեղինակների մասին

Սարգսյան Ա. Հ. - ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան, Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն

Էլ. փոստ armenuhis@mail.ru

Մելքոնյան Հ. Ս. - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան, Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն

Էլ. փոստ gspi1934@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 28.10.2021

Գրախոսվել է՝ 08.12.2021